

**ՅԱՂԱԳՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՉԱՅՆԻՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ  
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ.  
ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ՞, ԹԷ՞  
ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ**

ԱՆՆԱ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ  
anna\_arevshatyan@hotmail.com

Հայ միջնադարեան «ձայնից» մեկնությունների շարքում իր կայուն տեղն ունի *Յաղագս Գիտութեան Չայնից* մեկնությունը<sup>1</sup>, որը երաժշտագետ Նիկողոս Թահմիզեանը (1926-2011) վերագրել է Ժ. դարի յայտնի մատենագիր, ծիսագետ, մանկավարժ՝ Նարեկայ Վանքի վանահայր Անանիա Նարեկացուն<sup>2</sup>: Սակայն մեր ուսումնասիրությունը թոյլ է տալիս ենթադրելու, որ այդ մեկնության հեղինակը Է. դարի հանրագիտակ գիտնական, նշանավոր թուարանագետ, աստղագետ, աշխարհագրագետ, շարականագիր եւ երաժշտության տեսաբան Անանիա Շիրակացին է:

Մեր վարկածը հիմնուած է հետեւեալ տրամաբանութեան վրայ: Նուիրուելով հիմնականում քառեակ գիտությունների ոլորտին, որի մէջ էր մտնում նաեւ երաժշտությունը, Շիրակացին, քաջատեղեակ է եղել նորայիւրագորականների գիտական նուաճումներին: Նա իրականացրել է Նիկոմախոս Գերագացու թուարանական տասնական աղիւսակի հայկական տարբերակը, աղիւսակ, որի տառանդամներն ունէին նաեւ երաժշտատեսական մեկնություն, զբաղուել է հնչյունաբանութեան (ակուստիկայի) հարցերով, ուստի չէր կարող շրջանցել նաեւ ուրծայն համակարգի տեսությունը: Ուշագրաւ է Շիրակացու՝ որպէս երաժշտութեան գեղագետի երկնային ոլորտների ներդաշնակութեան (*harmonia mundi*) պլատոնական տեսութեանը յարող յայտնի ասոյթն. *«զգայարանքն առաջնոցն սուր էին քան զայժմոց՝ զոր վկայեն բազումք. վասն որոյ ոչ միայն զարեգականն գնացս կարացին նկատել, այլ եւ զբոլոր լուսաւորչացս կարացին դիտել եւ ճանաչել: Եւ ոչ միայն զորպիսութիւն գնացիցն՝ այլեւ գնհչումն ձայնից նոցա. եւ ի սոցանէ գտաւ արուեստ երաժշտականութեան աշխարհի»*<sup>3</sup>:

Շարականագիրների միջնադարեան ցուցակները Շիրակացուն են ընծայում Յարութեան ամբողջ հարցնակարգը (*«զՅարութեան հարցնակարգն զբովանդակն՝ Անանիա Շիրակացին»*<sup>4</sup>), ինչպէս նաեւ՝ մի շարք այլ շարականներ, որոնք այսօր էլ երգում են հայ եկեղեցում: Դրանց թում՝ «Վասն Մերոյ Փրկութեան» Հանգստեան Կարգի ծանր ողորմեան, Վարդավառի առաջին օրուայ կանոնի «Ուրախացիր, Պսակ Կուսից» ճաշուն, Սրբոց Թարգմանչաց հին կանոնի մի մասը են.:

«գՅարութեան հարցնակարգն գրովանդակն» արտայայտութիւնից պէտք է հասկանալ, որ Շիրակացին իրականացրել է ծիսակարգի պահանջներից բխող ստեղծագործական մի ծրագիր, որն ընդգրկում էր ութձայնի բոլոր ձայնեղանակներում երգուող հարցերի յօրինումը: Այդ ծրագիրը համեմատելի է դարձեալ գատկական շաբաթուայ համար նախատեսուած եւ նոյնպէս ութձայնի բոլոր ձայնեղանակներն ընդգրկող Ստեփանոս Միւնեցու (660/670-735) 80 երգից բաղկացած Աւագ Օրհնութիւնների շարքի ստեղծման հետ: Յիշենք, որ Է.-Ը. դարերում ութձայն համակարգի կարգաւորութիւնը ողջ արեւելաքրիստոնէական աշխարհի - այդ թում նաեւ Հայ Եկեղեցու - հրատապ խնդիրներից էր: Այդ գործին իր մասնակցութիւնն էր բերել, օրինակ, Շիրակացու ժամանակակիցներից Բարսեղ Ճոնը, որը Ներսէս Տայեցի (Է. դար) կաթողիկոսի հրամանով շրջել է Հայաստանի տարբեր գաւառներով, եկեղեցական երգեցողութիւնը միակերպութեան բերելու նպատակով: Դրա արդիւնքում նա կազմեց արդէն շրջանառութեան մէջ եղած հոգեւոր երգերի *Ճոնընտիր* ժողովածուն, որը, բնականաբար, պէտք է գաղափարուած լինէր ըստ ութձայն համակարգի, այդպիսով հիմք դառնալով Ստեփանոս Միւնեցու կարգաւորած ապագայ *Շարակնոցի* համար: Այսինքն, շարականագիրների միջնադարեան ցուցակների հաղորդած միահամուռ տեղեկութիւնը Շիրակացու՝ Յարութեան ողջ հարցնակարգի հեղինակ լինելու մասին, մատնանշում է ծանրակշիռ ստեղծագործական եւ միաժամանակ տեսական ծրագիր:

Այժմ ներկայացնենք խնդրոյ առարկայ մեկնութիւնը:

Ուշագրաւ է մեկնութեան վերնագիրը՝ «Յաղագս Գիտութեան Չայնից», ինչը որեւէ այլ «ձայնից» մեկնութեան մէջ չի հանդիպում ընդհուպ մինչեւ Գրիգոր Գապասակալեան, որն ընկալում էր ձայնագիտութիւնը իբրեւ գիտութիւն, այն էլ «*գաղտնի գիտութիւն*»<sup>5</sup>: Դա մէկ կողմից բնորոշում է Շիրակացու ձայնեղանակների տեսութեան ընկալումը որպէս գիտութիւն, միւս կողմից՝ միանգամայն համահունչ է նորայլատոնականների-նորպիլոթագորեանների առաջ քաշած ձայնեղանակների տեսութեան հայեցակարգին:

Մեկնութեան մէջ Շիրակացին իրեն դրսեւորում է որպէս եկեղեցական ծէսին քաջատեղեակ հեղինակ եւ շարականագէտ: Եկեղեցական կանոններից յիշատակուած են տաճարի նաւակատիքը, պղծուած տաճարի մաքրագործման կանոնը, եկեղեցօրհնէքը եւ խաչօրհնէքը, իսկ համաքրիստոնէական երգասացութիւններից՝ «Փառք Ի Բարձունս»ը, «Աւրհնեսցուք զՏէր» օրհնութիւնը եւ հարցը, ինչպէս նաեւ՝ «Հաւատամք»ը եւ «Միածին»ը: Վերջին երկուսի մասին հեղինակը յայտնում է, որ դրանք հաստատել են սուրբ հայրերը՝ այսինքն, սուրբ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսը:

Յիշենք «Յաղագս Գիտութան Չայնից» մեկնութեան բնագիրը. «Առաջինն յԱդամայ սկսաւ, զի նմա տուաւ առաջին ձայն, զոր կորոյս: Եւ Տեառն մարդեղութեամբ երգեցին հրեշտակք՝ զՓառք ի բարձունս: Առաջի կողմ Սովսէս երգեաց՝ Աւրհնեցէք զՏէր, եւ մանկունք՝ զՀարցն: Երկրորդ ձայն՝ ի Մինեայ բարբառ փողոյն: Նոյն ձայնիւ աւետեցին հրեշտակք կանանցն զՅարութիւն: Երկրորդ կողմ՝ Յեսուայ է փողն շուրջ գալ զԵրիքովու, Սամուէլ եւ դասք մարգարէիցն: Երրորդ ձայն՝ Դաւիթ եւ դասք երգչացն եւ Սուրբ Հոգին ի վերնատանն յառաքեալսն: Երրորդ կողմ՝ Սովսէս ի նաւակատիսն խորանին եւ Սողոմոն ի նաւակատիսն տաճարին: Չորրորդ ձայն՝ Եզրաս ի գալն Երուսաղէմ եւ նուագելն ի տաճար: Յայս ձայնս զՀաւատամքն եւ զՄիածինն եղին սուրբ հարքն: Չորրորդ կողմ՝ զտաճարին պղծիլն սրբէին: Նովին՝ եկեղեցարհներն եւ յաչարհներն: Իսկ ստեղն՝ Եսայի լուաւ զսրովբէից սրբասացութիւն: Ընդ ամենայն ժ, որ է թիւ կատարեալ, վասն զի ժ աստիճանաւ եւ ժ ձայնիւ պատուեց Աստուած զանմարմինս եւ զմարմնաւորսն, զոր յիմանալի աշխարհ բաղկացոյց ժ դասք արհնարանիչս իւր, եւ կարգապետեալ յիմանալի խորանին, յորոյ մինն ստորանկեալ անարժան գտաւ արհնելոյն»<sup>6</sup>:

Աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Առաջին ձայնեղանակը սկիզբ առաւ Ադամից, քանզի նրան էր տուել [Աստուած] առաջին ձայնը, որն այն կորցրեց: Եւ հրեշտակները երգեցին Տիրոջ մարդեղութիւնը՝ Փառք Ի Բարձունս: Առաջին կողմ եղանակը Սովսէսն երգեց՝ Օրհնեցէք Տիրոջը եւ մանուկները՝ Հարցնը: Երկրորդ ձայնեղանակը նման է Մինայի փողի ձայնին: Նոյն ձայնեղանակում հրեշտակներն աւետեցին [իւղաբեր] կանանց [Տիրոջ] Յարութիւնը: Երկրորդ կողմ եղանակը նման է Յեսուի փողին, որը պատում էր Երիքովի շուրջը՝ Սամուէլի եւ մարգարէների դասի հետ: Երրորդ ձայնեղանակը [յիշեցնում է] Դաւիթն եւ երգիչների խմբերը եւ Սուրբ Հոգին, որն իջաւ առաքեալների վրայ վերնատանը: Երրորդ կողմը [երգեցին] Սովսէսը՝ խորանի նաւակատիքին եւ Սողոմոնը՝ տաճարի նաւակատիքին: Չորրորդ ձայնեղանակը (երգեց) Եզրասը, գալով Երուսաղէմ եւ նուագելով տաճարում: Այս ձայնեղանակում սուրբ հայրերը կարգեցին [երգել] «Հաւատամք»ը եւ «Միածին»ը: Չորրորդ կողմը [երգում են] սրբելով պղծուած տաճարը: Նոյնով՝ Եկեղեցօրհները եւ Խաչօրհները: Իսկ ստեղիներում Եսային լսեց սերովբէների սրբասացութիւնը: Ընդամենը տասը, որը կատարեալ թիւ է, որովհետեւ տասն աստիճանով եւ տասը ձայնեղանակներով Աստուած պատուեց անմարմիններին եւ մարմնաւորներին, որ իր օրհնաբանիչների տասը դասերից ստեղծեց աննիթական, հոգեւոր, բանականութեամբ ճանաչելի աշխարհակերպ կարգելով աննիթական խորանը, մէկին ստորընկեց արեց, օրհնելուն անարժան գտնելով»<sup>7</sup>:

Վերջին պարբերությունը համընկնում է Խորենացու «Յաղագս Կարգաց Եկեղեցոյ» երկի ձայնեղանակների մեկնութեան եզրափակիչ հատուածին. *«որ զիմանալի աշխարհն բազկացոյց, տասն թուովք արինարանիչս իւր կարգապետեաց իմանալի խորանին, յորոց մինն ստոր անկեալ, յարինելոյն զԱստուած անարժան գտաւ»*<sup>8</sup>:

Բոլոր ձեռագրերում, ուր գտնում ենք «Յաղագս Գիտութեան Չայնից» մեկնութիւնը, բերում է «Անանիայի Վարդապետի Յաղագս Գիտութեան Չայնից» խորագիրը՝ առանց որեւէ որոշակիացման: Թահմիզեանը ընծայել է այդ գրուածքը Անանիա Նարեկացուն, չփաստարկելով իր վարկածը: Մեր կարծիքով, աւելի քան տրամաբանական է այդ մեկնութիւնը վերագրել Շիրակացուն, որը լինելով հմուտ շարականագիր եւ ձայնագէտ, հանդիսանում է այդ մեկնութեան իսկական, իրական հեղինակը:

Ուշագրաւ է, որ Շիրակացու սեփական շարադրանքին հետեւում է բառացիորէն մեջբերուած «Յաղագս Կարգաց Եկեղեցոյ» ձեռագրերում Խորենացուն մշտապէս ընծայուող յայտնի գրուածքը, ինչը, եթէ ընդունենք «Յաղագս Գիտութեան Չայնից» մեկնութիւնը որպէս Շիրակացու երկասիրութիւն, գալիս է հաստատելու, որ «Յաղագս Կարգաց Եկեղեցոյ» գրուածքի հեղինակը Խորենացին է, այլ ոչ Մովսէս Սիւնեցին, ինչպէս պնդում է Թահմիզեանը իր «Մովսէս Սիւնեցին եւ իր «Յաղագս Կարգաց» Գրուածքը» յայտնի յօդուածում<sup>9</sup>, փոխարինելով բոլոր ձեռագրերում անխտիր կրկնուող «Մովսէս Քերթոզահօր»՝ շատ որոշակի արտայայտուած հեղինակային պատկանելիութեան ցուցումը «Մովսէսի Քերթոզի»՝ այսինքն, Սիւնեցու անունով:

Բնական է, որ ոսկեղարեան աւանդոյթների ժառանգորդ Շիրակացու համար մեծագոյն հեղինակութիւն պէտք է լինէր ժամանակագրական առումով իրեն բաւական մօտ ապրած պատմահայր եւ շարականագիր Խորենացին: Այդ է պատճառը, որ նա սեփական «ձայնից» մեկնութեանը կցել է նրա «Յաղագս Կարգաց» երկի ձայնեղանակների մեկնութեանը նուիրուած մասը, հաւանաբար, բարձր գնահատելով այդ երկի արժանիքները եւ նրանում արծարծուած աստուածաբանական, ծիսագիտական, ձայնագիտական եւ գեղագիտական հարցերի կարեւորութիւնը:

Այսպիսով, ըստ մեր առաջարկած տեսակէտի, Շիրակացու երկասիրութիւնների ցանկին կարելի է յաւելել «Յաղագս Գիտութեան Չայնից» մեկնութիւնը, որը նրա մտածողութեան համապարփակ լինելու յաւելեալ մի ապացոյց է, ներկայացնելով նրան որպէս իր ժամանակի հանճարեղ գիտնական եւ արուեստագէտ:

- <sup>1</sup> Տե՛ս՝ Մաշտոցի անուան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 1719: Այդ մեկնութեանն անդրադարձել ենք բազմիցս, չբարձրացնելով, սակայն, հեղինակային պատկանելութեան հարցը (Ա. Արեւշատեան, *Հայ Միջնադարեան «Չայնից» Մեկնութիւններ*, Երեւան, 2003, էջ 56, 78, 120-121. նաեւ՝ *Չայնեղանակների Ուսմունքը Միջնադարեան Հայաստանում*, Երեւան, 2013, էջ 81-86, 218-219. նաեւ՝ A. Arevshatian, “Armianskie Srednevekovie ‘Tolkovania Na Glasi’ I Ikh Paralleli V Blijnevostochnikh Muzikalno Esteticheskikh Traktatakh” (Հայ միջնադարեան ‘ձայնից’ մեկնութիւնները եւ նրանց զուգահեռները բիզանդական գեղագիտական երաժշտութեան մէջ), *Naookovii Visnik* (Գիտութիւնների բանբեր), *Vip. 15*, Kiev, 2001, էջ 41-42. նաեւ՝ “Po Sledam Muzikovedcheskikh Iziskanii Komitasa” (Կոմիտասի երաժշտագիտական հետազոտութիւնների հետքերով), *Aktualnie Problemi Izucheniya Tserkovno-Pevcheskogo Iskustva Naooka I Praktika, Gimnologia, Vip. 6* (Հոգեւոր երգարուեստի ուսումնասիրման արդի խնդիրները. գիտութիւն եւ փորձ, օրհնաբանութիւն, Հրատ. 6), Մոսկուա, 2011 էջ 45-46. նաեւ՝ A. S. Arevsatyan, “Les Traités Armeniens Medievaux sur l’Interpretation des Modes Musicaux et leurs Paralleles au Proche Orient”, *Revue des Etudes Armeniennes*, Paris, t. 26, 1996-1997, էջ 360-361 նաեւ՝ A. S. Arevsatyan, “Sur les Traces des Etudes Musicologiques de Komitasa”, *Revue des Etudes Armeniennes*, Paris, t. 33, էջ 320-321:
- <sup>2</sup> Նիկողոս Թահմիզեան, «Քննական Տեսութիւն Հայոց Հին Եւ Միջնադարեան Երաժշտութեան Պատմութեան», *Լրարէր Հասարակական Գիտութիւնների*, 1971, N1, էջ 56, ուր հեղինակը 87րդ ծանօթագրութեան մէջ, վկայակոչելով Ուխտանէսին, գրում է. «Անանիա անունով մեզ ծանօթ վարդապետներից ամենայայտնի երաժիշտն է Անանիա Նարեկացին, - (իսկ ինչու՞ ոչ Շիրակացին - Ա.Ա.),- եւ աստուածային շնորհիւ պայծառացեալ, եւ ճրիւք սուրբ հոգւոյն առջեւ գիտութեամբ, եւ հոգեւորական երգով գեղգեղմամբ գեր ի վերոյ քան գամենեսեան» (Ուխտանէս Եպիսկոպոս, *Պատմութիւն Հայոց*, Վաղարշապատ, 1871, էջ 8): Անանիա Նարեկացուն եւ Նարեկայ Վանքի երաժշտական ասանդոյթներին Թահմիզեանն անդրադարձել է նաեւ աւելի ուշ, սակայն առանց խնդրոյ առարկայ մեկնութեան արծարծման (տե՛ս նրա՝ *Գրիգոր Նարեկացին Եւ Հայ Երաժշտութիւնը V-XV դդ.*, Երեւան, 1985, էջ 50-54):
- <sup>3</sup> *Անանիա Շիրակացի. Տիեզերագիտութիւն Եւ Տումար*, աշխ. Աշոտ Աբրահամեան, Երեւան, 1940, էջ 83-84:
- <sup>4</sup> *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց Վանքի, Հտր. Դ.*, կազմեց՝ Նորայր Եպս. Պօղարեան, Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1969, էջ 485. նաեւ՝ *Հտր. Բ.*, էջ 629:
- <sup>5</sup> Գրիգոր Գապասակալեան, *Գիրք Երաժշտական*, Կոստանդնուպոլիս, Տպ. Պօղոս Յովհաննէսեան, 1803, էջ 70, 82-83, 93. նաեւ մեր յօդուածը՝ «Գրիգոր Գապասակալեանի «Գիրք Ուրից Չայնից» Ձեռնարկը», *«Մանրուսում» Միջազգային Երաժշտագիտական Տարեգիրք*, Հտր. Գ., Երեւան, 2009, էջ 231:
- <sup>6</sup> Արեւշատեան, *Հայ Միջնադարեան «Չայնից»*, էջ 120:
- <sup>7</sup> Նոյն, էջ 121:
- <sup>8</sup> Նոյն, էջ 120:

---

<sup>9</sup> Նիկողոս Թահմիզյան, «Մովսէս Սիւնեցիի եւ իր «Յաղագս Կարգաց» Գրուածքը»,  
*Լրաբեր Հասարակական Գիտութիւններ*, 1972, N 11, էջ 85-94:

WHO IS THE AUTHOR OF THE INTERPRETAION OF  
“HAGHAKES KIDUTYAN TSAYNITS”:  
ANANIA NAREKATSI OR ANANIA SHIRAKATSI?  
(SUMMARY)

ANNA AREVSHATYAN  
anna\_arevshatyan@hotmail.com

The author disputes Nikoghos Tahmizian’s contention that Anania Narekatsi (10<sup>th</sup> century) was the author of the interpretation of “Haghakes Kidutyany Tsaynits.”

She notes that all medieval writers who referred to the said interpretation only mentioned the first name of the author, Anania, while Tahmizian considered its author to be Anania Narekatsi without giving any explanation.

The author counter-argues that Anania Shirakatsi was the author of the said interpretation as he had a significant legacy in church music, and the style and title of the interpretation come close to the mindset of the 7<sup>th</sup> century scientist Anania Shirakatsi.